ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17 հոկտեմբերի 2016 թվականի N 134-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 128-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի 2016 թվականի հոկտեմբերի 17-ի N 16498-16 զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի <<*Գործուղման մեկնելու մասին*>> N 128-Ա կարգադրության 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ ***Հարություն Ալեքսանյանին*** 2016 թվականի հոկտեմբերի 7-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում 11 օրով, գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հետևյալ համայնքներ՝ գյուղ Զառ՝ հոկտեմբերի 7-ից 11-ը *(երեք օր)*, գյուղ Զովունի՝ հոկտեմբերի 18-ից 21-ը *(չորս օր)* և գյուղ Նոր Երզնկա հոկտեմբերի 26-ից 31-ը *(չորս օր) 2016 թվականի վարչական հսկողություն* իրականացնելու համար:>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 17
ք. Հրազդան